ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հ. Գ. ԻՆՃԻԿՅԱՆ, Վ. Ա. ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

Հայաստանում սովետական իշխանության հաղթանակը հնարավորություն տվեց աշխարհի տարբեր մասերում ցրված հայությանը ունենալ ոչ միայն հայրենիք ու պետականություն, այլև հայրենի մտքի ու գիտության կենտրոններ։ 1920 թ. բացվեց Երևանի պետական համալսարանը, առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը Հայաստանում։ Նորաստեղծ հանրապետությունում գիտության զարգացման համար ստեղծված բարենպաստ պայմանների և կադրերի առկայության շնորհիվ օրակարգի հարց դարձավ նաև համալսարանում արևելագիտական բաժին ունենալու խնդիրը։ 1923 թ. սկսվեց արևելագիտական առարկաների դասավանդումը։ Համալսարանում մանկավարժական և գիտահետազոտական բեղմնավոր գործունեություն ծավալած մի շարք ականավոր գիտնականներ, հենվելով հայ արևելագիտության հարուստ ավանդույթների վրա, ստեղծեցին այնպիսի գործեր, որոնք որակական նոր արժեք էին ներկայացնում Արևելքի մասին հայ գիտության պատմության մեջ։

Լայնածավալ է եղել համալսարանում Հ. Աճառյանի՝ արևելագիտության բնագավառում դասախոսական աշխատանքի ծրագիրը։ Նա դասավանդել է թուրքերեն, պարսկերեն, արաբերեն, սանսկրիտ, արևելյան լեզուների պատմություն, Արևելքի պատմություն և այլն։ Դրանցից մի քանիսի համար նա կազմել է հատուկ ձեռնարկներ[1]։ Հ. Աճառյանի վիթխարի գրական ժառանգության մեջ իրենց ուրույն տեղն ունեն նաև արևելագիտական ամենաբազմապիսի հարցերի վերաբերյալ գրած ու հրապարակած աշխատությունները[2]։ Հ. Աճառյանը հատուկ ուսումնասիրություն է գրել իրանական կրոնական աղանդների մասին[3], ուսումնասիրել է բեհայիստական գաղափարախոսության հիմնական սկզբունքները[4], ընդ որում այդ մասին տեղեկություններ քաղելով սկզբնաղբյուրներից, մասնավորապես «Քիթաբ ուլ-աքդասից», որը գրել է այդ վարդապետության հիմնադիր Բեհա-Ուլլան, բացահայտելով հիշյալ ուսմունքի հետադիմական և կոսմոպոլիտական բնույթը, ինչպես նաև եվրոպական պետությունների կողմից այն խրախուսվելու պատճառները։

---

1 *Տե՛ս, օրինակ, Հ. Աճառյան, Պարսկական հատընտիր, Երևան, 1937։*

2 *Հ. Աճառյան, Ֆիրդուսի, Երևան, 1942։ Իբն-ի Բատուտա, Երևան, 1940։ Թուրք պատմագիրներ, «Հանդես ամսօրյա», 1912։ Վավերագրեր հայ-պարսկական հարաբերությանց մասին։ Ընդօրինակեց, տառադարձեց և թարգմանեց՝ Հ. Աճառյան, Երևան, 1927։ Պարսկական բեվեռագրերի լուծման պատմությունը, Երևանի պետ. համալսարանի «Գիտական աշխատություններ», 1951, հատ. XXXIV (ֆիլոլոգիական սերիա)։*

3 *Հ. Աճառյան, Գյորանների և Թումարիների կրոնը, պետ. համալսարանի «Գիտ. տեղեկագիր», 1925, № 1։*

4 *Հ. Աճառյան, Կյանքիս հուշերից, Երևան, 1967։*

Հ. Աճառյանը հրապարակել է նաև Իրանի տարբեր քաղաքներում պահվող հայկական ձեռագրերի ցուցակներ[5], ուսումնասիրել միջնադարյան պարսկական դասական պոեզիայի մի շարք ներկայացուցիչների ստեղծագործությունները և նրանց մասին գրել ուսումնասիրություններ, կատարել թարգմանություններ, հանդես է եկել արևելագիտական հետազոտությունների մասին բազմաթիվ գրախոսականներով և այլն։ Նրա լեզվաբանական աշխատությունները հսկայական արժեքավոր նյութ են պարունակում արևելյան լեզուների, հատկապես իրանական և սեմական լեզուների մասին։

Ականավոր պատմաբան Հ. Մանանդյանը հայ ժողովրդի պատմությանը նվիրված իր բարձրարժեք ուսումնասիրություններում գիտական խոր վերլուծության է ենթարկում նաև Հայաստանի հարևան երկրների պատմության հարցերը։ Մեծանուն գիտնականը միշտ էլ եղել է այն համոզման, որ առանց հարևան ժողովուրդների կյանքում տեղի ունեցող դեպքերին մոտիկից ծանոթանալու, առանց ընդհանուր քաղաքական իրադրությունը հաշվի առնելու անկարելի է հասկանալ հայ իրականության պատմական շատ իրադարձություններ։

Հ. Մանանդյանի աշխատությունները[6] հայ արևելագիտությունը հարստացրին նոր արժեքներով և խթանեցին սովետահայ արևելագիտական-պատմագիտական մտքի հետագա զարգացումը։

Ակադեմիկոս Գ. Ղափանցյանի ղեկավարությամբ համալսարանում բարձր մակարդակի վրա դրվեց Հին Արևելքի մի շարք լեզուների ուսումնասիրությունը.

Բազմաբեղուն ու վաստակաշատ գիտնական Լեոն իր աշխատություններում[7] հանգամանալից կերպով կանգ է առնում նաև Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների պատմության հարցերի վրա։ Հարկ է նշել, որ հայ ժողովրդի պատմության հարցերի շուրջը կարդացած իր դասախոսություններում ևս Լեոն ալգալի տեղ էր հատկացնում ընդհանուր արևելագիտական հարցերին։

Առհասարակ անհրաժեշտ է նշել, որ համալսարանում աշխատելու տարիներին մեր ավագ սերնդի բոլոր ականավոր հայագետ-արևելագետները հայ ժողովրդի պատմության և մշակույթի հարցերի լուսաբանման կապակցությամբ այս կամ այն չափով անդրադարձել են նաև հարևան ժողովուրդների պատմության, գրականության, լեզվի հարցերին, տալով բազմաթիվ արժեքավոր նյութեր և կատարելով կարևոր ընդհանրացումներ։

---

5 Հ. Աճառյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Թեհրանի, Վիեննա, 1936։ Ցուցակ հայերեն ձեռագրաց Թավրիզի, Վիեննա, 1910։

6 Հ. Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Ա, Բ, Գ, Երևան, 1945—1957։ О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. эры—XV в. н. э.), Ереван, 1930; Ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ, Երևան, 1939, Заметки о феоде и феодальном войске Парфии и Аршакидской Армении, Тифлис, 1932 Էրատոսթենեսի ստադիոնը և պարսից առպարեգը, Երևան, 1934։ Պատմա-աշխարհագրական մանր հետազոտություններ, Երևան, 1945։ Маршруты персидских походов императора Ираклия. „Вестник АН СССР", 1948, № 3.

7 Լեո, Հայոց պատմություն, հատ. 1—3, Երևան, 1946—1947։ Հայկական տպագրություն, հատ. 1—3, Թիֆլիս, 1901—1902։ Խոջայական կապիտալը և նրա քաղաքական, հասարակական դերը հայերի մեջ, Երևան, 1934 և այլն։

Այսպես, ակադեմիկոս Մ. Աբեղյանը իր «Հայոց հին գրականության պատմություն»[8] մեծարժեք աշխատությունում վերլուծության է ենթարկում հայ-իրանական գրական և մշակութային փոխազդեցությունները։ Անվանի գիտնականի գրչին են պատկանում նաև արժեքավոր ուսումնասիրություններ, նվիրված իրանական էպոսին[9]։ Խ. Սամվելյանը[10] իր որոշ աշխատություններում արծարծում է նաև Իրանի պատմության առանձին հարցեր։

Անվանի գրականագետ Գևորգ Ասատուրը կազմում է Մերձավոր Արևելքի գրականության պատմության մի ձեռնարկ[11], որտեղ քննության են ենթարկվում հարևան ժողովուրդների դասական գրականության հարցերը։

Համալսարանի ընդհանուր պատմության դասընթացի մեջ ևս հատուկ տեղ է հատկացվել Արևելքի ժողովուրդների հին, միջնադարյան և նոր ու նորագույն շրջանի պատմությանը, կարդացվել է հատուկ դասընթաց՝ «Արևելքի գեղարվեստը»։

1940 թ. համալսարանում լացվում է արևելյան լեզուների և գրականության ամբիոնը, որի ղեկավարությունը իր վրա է վերցնում Հ. Աճառյանը։ Միաժամանակ բանասիրական ֆակուլտետի կազմում ստեղծվում է արևելյան բաժին՝ պարսկերեն և արաբերեն լեզու և գրականություն առանձին ճյուղերով։ Այսպիսով, նախապատերազմյան տարիներին համալսարանը դառնում է հանրապետության արևելագիտական մտքի կենտրոն։

Այդ նույն շրջանում ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալում (Արմֆան) հրատարակվել են մի շարք արժեքավոր աշխատություններ և հոդվածներ հայ ժողովրդի և հարևան երկրների ժողովուրդների պատմության և մշակույթի վերաբերյալ։

Այսպես, 1934 թ. Ֆիրդուսու ծննդյան 1000-ամյակի առթիվ լույս տեսավ հատուկ ժողովածու, որտեղ հրատարակվեցին մի շարք ուշագրավ իրանագիտական հետազոտություններ։ Հատկապես հիշատակության արժանի է Կ. Մելիք-Օհանջանյանի «Ֆիրդուսին և Իրանի վիպական մոտիվները «Շահնամե»-ում և հայ մատենագրության մեջ» ուսումնասիրությունը։

Արմֆանի հրատարակությամբ լույս են տեսնում մի շարք արժեքավոր ուսումնասիրություններ, որոնք առնչություն ունեն արևելագիտության հետ։ Հատկապես հետաքրքիր աշխատություններով հանդես է գալիս ակադեմիկոս Ս. Երեմյանը։ Նրա մի շարք աշխատություններ կարևոր ներդրում են նաև իրանագիտության մեջ[12]։

Արևելքի երկրների տնտեսական կյանքի, ազգարային հարաբերությունների, ինչպես նաև քաղաքական կյանքի պատմությունը՝ կապված Հայաստանի տնտեսական և քաղաքական կյանքի պատմության հետ, արծարծվում էր նաև

---

8 Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք 1—2, Երևան, 1944—1946։ Տե՛ս նաև ռուսերեն, История древнеармянской литературы, Ереван, 1948.

9 Մ. Աբեղյան, «Շահնամա»-յի ոտանավորի չափը հայ բանաստեղծության մեջ։ Տե՛ս «Ֆիրդուսի», բանաստեղծի ծննդյան հազարամյակին նվիրված ժողովածու, Երևան, 1934։

10 Խ. Սամվելյան, Հին Արևելքի պատմությունը։ Առաջավոր Ասիայի պատմության աղբյուրներն ու պատմագրությունը, Երևան, 1938։

11 Գ. Ասատուր, Մերձավոր Արևելքի գրականության պատմություն, Երևան, 1931։

12 С. Т. Еремян, Торговые пути Закавказья в эпоху Сасанидов по Tabula Peutingeriana. «Вестник древней истории», 1939, № 4; Сюния и оборона Сасанидами кавказских проходов. «Известия» (Арм. ФАН), 1941, № 7; Народно-освободительная война армян против персов в 450—451 гг., «Вестник древней истории», 1951, № 4.

Թ. Ավդալբեգյանի, Բ. Հարությունյանի[13], Բ. Առաքելյանի[14], Հ. Զորյանի[15] և այլ գիտնականների աշխատություններում։

1943 թ. Հայասանի գիտությունների ակադեմիայի հիմնադրումը մեծապես նպաստեց սովետահայ արևելագիտության հետագա առաջընթացին։ Նորաստեղծ պատմության ինստիտուտում հայ ժողովրդի պատմության վերաբերյալ հրատարակվեցին բազմաթիվ արժեքավոր մենագրություններ և ուսումնասիրություններ, որոնք պարունակում էին նաև արևելագիտական հարուստ նյութ։

Այնուամենայնիվ, մինչև 1950-ական թթ. կեսերը արևելագիտությունը էգալիորեն ետ էր մնում հանրապետության հասարակական գիտությունների զարգացման ընդհանուր մակարդակից։

1954 թ. մարտին ՀՍՍՀ ԳԱ նախագահության որոշմամբ պատմության ինստիտուտում ստեղծվեց Մերձավոր և Միջին Արևելքի երկրների պատմության և տնտեսության հարցերը ուսումնասիրող խումբ, որը ընդամենը մի քանի տարվա ընթացքում մշակեց և հրապարակեց արևելագիտական առանձին հրատապ պրոբլեմների վերաբերյալ մի շարք հետաքրքիր աշխատություններ[16]։ Սակայն հանրապետությունում ստեղծված այս արևելագիտական փոքրիկ բջիջը, բնականաբար, չէր կարող բավարարել այն պահանջները, որոնք դրվում էին հայ արևելագիտության առջև։ Անհրաժեշտ էր ստեղծել մի այնպիսի օջախ, որտեղ համեմատաբար լայն մասշտաբի գիտահետազոտական աշխատանքներ ծավալվեին Արևելքի երկրների պատմության, տնտեսության և մշակույթի ուսումնասիրության բնագավառում։ Ուստի պատմության ինստիտուտի վերոհիշյալ խմբի բազայի վրա 1958 թ. հոկտեմբերին կազմակերպվեց ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության սեկտորը, Հայաստանի առաջին ինքնուրույն գիտահետազոտական արևելագիտական հիմնարկությունը։

Արևելագիտության սեկտորը ձեռնարկեց հանրապետության կարող արևելագետներին նորաստեղծ գիտական օջախում համախմբելու, նոր երիտասարդ կադրեր պատրաստելու, գործունեության ծրագրեր մշակելու, Սովետական Միության մյուս արևելագիտական հիմնարկությունների հետ կապեր հաստատելու, անհրաժեշտ մասնագիտական գրականություն հայթայթելու գործը։

Նկատի ունենալով, որ Հայաստանի պատմական զարգացումը սերտորեն կապված է եղել Իրանի, Թուրքիայի և արաբական երկրների հետ, արևելագի-

---

13 Б. М. Арутюнян, Крупное монастырское хозяйство в Армении в XVII—XVIII вв., Ереван, 1940.

14 Բ. Առաքելյան, Հայաստանը արաբական տիրապետության առաջին ժամանակաշրջանում և հայ ժողովրդի պայքարը անկախության համար, «Գիտական ժողովածու», 1941։ Նույնի՝ Հայերի ապստամբությունը արաբական լծի դեմ 703 թ., Արմֆանի «Տեղեկագիր», 1941, № 5—6։

15 Հ. Զորյան, Աբու Յուսուֆ Յակուբ—Հողային հարկի գիրքը, ՀՍԽՀ պատմության և գրականության ինստիտուտի «Տեղեկագիր», 1937, № 2։

16 Ս. Ղ. Սարգսյան, Աշխատավորության վիճակը ժամանակակից Թուրքիայում, Երևան, 1955։ Նույնի՝ Հոկտեմբերյան մեծ ռևոլյուցիան և ազգային-ազատագրական պայքարը Թուրքիայում 1918—1922 թթ., Երևան, 1957։ Հ. Մ. Եղանյան, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և ազգային-ազատագրական շարժումները Իրանում 1917—1921 թթ., Երևան, 1957։ Հ. Թուրյանց, Նավթարդյունաբերության տեղաբաշխումը և անգլո-ամերիկյան իմպերիալիստների հակասությունները Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում, Երևան, 1957։

տության սեկտորում ստեղծվեցին Թուրքագիտական, իրանագիտական և արաբագիտական խմբեր։ 1959 թ. ստեղծվեց նաև քրդագիտության խումբ։ Հետագայում կազմակերպվեց նաև գիտական ինֆորմացիայի խումբ, որի խնդիրն էր գիտական մշակման ենթարկել տարբեր լեզուներով ստացված գրականությունն ու մամուլը և պաշտոնական օգտագործման համար կազմել սփյուռքահայ մամուլի բյուլետեններ՝ Մերձավոր ու Միջին Արևելքի քաղաքական և տնտեսական կյանքի տարբեր հարցերի վերաբերյալ։ Այդ խմբերը հետագայում վերածվեցին բաժինների։

1950-ական թթ. սկսած ոչ միայն Սովետական Միությունում, այլև ամբողջ աշխարհում արևելագիտության առաջատար ուղղություն դարձավ Արևելքի ժողովուրդների զարգացման հետ կապված ժամանակակից պրոբլեմների ուսումնասիրությունը։ Այդ կապակցությամբ սովետական արևելագիտական հիմնարկությունների առջև խնդիր էր դրվում ամենալուրջ ու բազմակողմանի կերպով ուսումնասիրել ժամանակակից Արևելքի երկրների պատմության, տնտեսության, զարգացման հեռանկարների և յուրահատկությունների, մշակույթի, հոգևոր կյանքի և նման կարգի բազմաթիվ այլ պրոբլեմներ։ Նորաստեղծ սեկտորին հանձնարարվեց զբաղվել Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդների գերազանցապես նոր և նորագույն պատմության, տնտեսության և մշակույթի հարցերով։

Սեկտորի գիտահետազոտական թեմատիկայում տեղ են գտել նաև հայ ժողովրդի և նրա հարևան ժողովուրդների միջև եղած պատմական և մշակութային կապերի, Արևելքի մի շարք երկրներում հայկական հին ու նոր գաղթօջախների պատմության լուսաբանման հարցերը։

Անցած տասներկու տարիների ընթացքում վերոհիշյալ պրոբլեմների գծով սեկտորը հրատարակել է մոտ 50 մենագրություններ և ուսումնասիրություններ, ինչպես նաև հանրապետական, միութենական և արտասահմանյան գիտական հանդեսներում՝ երկու հարյուրից ավելի հոդվածներ։

Սեկտորի թուրքագետները հետազոտել են մի շարք պրոբլեմներ, բացահայտելով օսմանյան կայսրության, մասնավորապես երիտթուրքական կառավարության մոլի շովինիստական ներքին քաղաքականությունը և պանիսլամիզմի, օսմանիզմի և պանթուրքիզմի ռեակցիոն գաղափարախոսությունների վրա կառուցված զավթողական արտաքին քաղաքականությունը։ Թուրքիայի ագրեսիվ քաղաքականության հարցը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի շրջանում, գերմանական բլոկի երկրների հետ նրա դաշինքի մեջ մտնելու պատճառները և այս կարգի այլ հարցեր իրենց համոգիչ մեկնաբանությունն են գտնում հայերեն և ռուսերեն լեզուներով հրատարակված՝ Ե. Սարգսյանի «Օսմանյան կայսրության նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին» ծավալուն մենագրությունում։

Ե. Սարգսյանը հատուկ ուսումնասիրության առարկա է դարձրել նաև օսմանյան Թուրքիայում, մասնավորապես Արևմտյան Հայաստանում, ագրարային հարաբերությունների հարցը[17]։

Սեկտորի թուրքագետները իրենց առաջնահերթ խնդիրն են համարում մերկացնել թուրք պատմաբանների կողմից հայ ժողովրդի և մյուս ոչ թուրք

[17] Ե. Ղ. Սարգսյան, Օսմանյան կայսրության ագրարային քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում, Երևան, 1957։

ժողովուրդների պատմությունը նենգափոխելու և խեղաթյուրելու փորձերը։ Մասնավորապես սուր քննադատության է ենթարկվում ժամանակակից թուրքական պատմության մեջ տիրապետող ռեակցիոն, պանթուրքիստական ուղղությունը, որն արդարացնում է օսմանյան կայսրության ազգային փոքրամասնությունների նկատմամբ թուրքական կառավարող շրջանների վարած շովինիզմի և գենոցիդի քաղաքականությունը։ Վերոհիշյալ հարցերին են նվիրված Ե. Սարգսյանի ու Ռ. Սահակյանի մենագրությունը[18] և մի շարք այլ ուսումնասիրություններ ու հոդվածներ։

Վերոհիշյալ հարցերով զբաղվում է նաև Հայաստանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտը[19], մի հանգամանք, որը հնարավորություն է տալիս միավորել այնպիսի գիտնականների և հայագետների ջանքերը՝ հակահարված տալու թուրք ռեակցիոն հեղինակների շովինիստական ու կեղծարարական «տեսություններին»։

Սեկտորում լուրջ ուսումնասիրության առարկա է հանդիսանում ազգային հարցի պրոբլեմը օսմանյան կայսրությունում ու հանրապետական Թուրքիայում։ Այս պրոբլեմը իր լուսաբանումն է գտել մի շարք հետազոտություններում՝ «Ազգային փոքրամասնությունների վիճակը Թուրքիայում», «Երիտթուրքական կառավարության ազգային քաղաքականությունը առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին», «Երիտթուրքերի ազգային քաղաքականության արտացոլումը թուրքական և արևմտյան բուրժուական պատմագրության մեջ», «Երիտթուրքերի ազգային քաղաքականությունը արաբական երկրներում», «Ազգային փոքրամասնությունների վիճակը Թուրքիայում ըստ օսմանյան օրենսդրական ակտերի», «Հայերի գենոցիդը օսմանյան կայսրության մեջ» փաստաթղթերի ընդարձակ ժողովածուում[20] և այլ գործերում։

Ուսումնասիրվում է Թուրքիայի միջազգային հարաբերությունների, ինչպես նաև արևմտյան իմպերիալիստական պետությունների հետ նրա տնտեսական և քաղաքական կապերի հարցը[21]։

Հատուկ ուշադրություն է դարձվում սովետա-թուրքական հարաբերությունների տարբեր փուլերի լուսաբանմանը։ «Անդրկովկասը և սովետա-թուրքական հարաբերությունները», «1925 թ. սովետա-թուրքական պայմանագրի հարցի շուրջը», «Թուրքիայի տնտեսական կապերը Սովետական Միության և մյուս սոցիալիստական երկրների հետ» աշխատություններում վերլուծության են ենթարկվում սովետա-թուրքական հարաբերությունների պատմության առավել կարևոր շրջանները։ Մերկացվում են սովետա-թուրքական հարաբերությունների պատմության վերաբերյալ արևմտյան և թուրքական հեղինակների աշխատություններում տեղ գտած կեղծարարությունները։ Այդ հար-

---

18 Ե. Ղ. Սարգսյան, Ռ. Դ. Սահակյան, Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963։

19 М. К. Зулалян, Вопросы древней и средневековой истории Армении в освещении современной турецкой историографии, Ереван, 1970.

20 «Геноцид армян в Османской империи». Сборник документов и материалов, под ред. проф. М. Г. Нерсисяна, Ереван, 1966.

21 Տե՛ս, օրինակ, А. С. Аветян, Германский империализм на Ближнем Востоке, М., 1966· Ռ. Պ. Կոնդակչյան, Արևմտագերմանական մոնոպոլիաների ներխուժումը Թուրքիա, Երևան, 1963։

ցին հատկապես նվիրված է Ռ. Սահակյանի աշխատությունը՝ սովետա-թուրքական հարաբերությունների մասին[22]։

Թուրքիայի հարաբերությունները իր հարևան պետությունների հետ արտացոլվում են «Թուրք-հունական հարաբերությունները երիտթուրքերի տիրապետության տարիներին», «Թուրք-իրանական հարաբերությունները XX դ. սկզբին» հետազոտություններում։ Ներկայումս սեկտորում կազմվում է նաև «Թուրք-արաբական հարաբերությունները XIX դ. վերջին և XX դ. սկզբին» փաստաթղթերի ժողովածուն։

Հայ թուրքագետները զբաղվում են նաև Թուրքիայի տնտեսական զարգացման ուղիների պրոբլեմով։ Հ. Գ. Ինճիկյանի «Բուրժուազիայի ձևավորման և զարգացման առանձնահատկությունները օսմանյան Թուրքիայում» ավարտվող աշխատության մեջ ցույց են տրվում պատմական այն պայմանները, որոնցում տեղի է ունեցել օսմանյան կայսրության բազմազգ բուրժուազիայի ձևավորումը և զարգացումը, թուրքական, այլազգի և արտասահմանյան կապիտալի գերը այդ պրոցեսում, երիտթուրքերի տնտեսական քաղաքականությունը և այդ քաղաքականության արդյունքները երկրի զարգացման գործում՝ մինչև երիտասարդ թուրքերի անկումը։

Ե. Սարգսյանի կողմից պատրաստված և հրատարակության ներկայացված «Օսմանյան կայսրության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում և մեծ պետությունները XIX դ. վերջին և XX դ. սկզբին» ծավալուն մենագրության մեջ լուսաբանվում են Թուրքիայի կառավարող շրջանների քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում, իմպերիալիստական պետությունների հետապնդած շահերը և հայ ժողովրդի պայքարի օգտագործումը մեծ պետությունների կողմից՝ Մերձավոր Արևելքում իրենց դիրքերի ամրապնդման համար։

Արևելագիտության սեկտորի իրանագիտական բաժինը մշակել է մի շարք թեմաներ և պրոբլեմներ նեոպատերազմյան տարիներին քիչ ուսումնասիրված Իրանի ներքին կյանքին վերաբերող հարցերի, Իրանի միջազգային հարաբերությունների, այդ թվում նաև սովետա-իրանական հարաբերությունների, բուրժուական գաղափարախոսության, հասարակական-քաղաքական հոսանքների, իրանական մշակույթի հարցերի վերաբերյալ։

XIX դ. Իրանի ագրարային հարաբերություններին նվիրված առանձին գրքերով հրատարակված[23] ուսումնասիրություններում մանրազնին վերլուծության են ենթարկվել հողատիրության և հողօգտագործման ձևերը Իրանում, հարկային սիստեմը, գյուղացիության շահագործման եղանակները և ագրարային-գյուղացիական պրոբլեմի հետ կապված մի շարք այլ հարցեր։ Ցույց է տրվում նաև Իրանում ֆեոդալական կարգերի քայքայման և կապիտալիստական հարաբերությունների՝ գյուղատնտեսության մեջ ներթափանցման պրոցեսը։ Ուսումնասիրվել է նաև գյուղացիության վիճակը ժամանակակից Իրանում[24]։ Հրատարակվել է աշխատություն Իրանի հասարակական-քաղաքական

---

22 Ռ. Գ. Սահակյան, Սովետա-թուրքական հարաբերությունների պատմության հակագիտական լուսաբանումը ժամանակակից թուրք պատմագրության մեջ, Երևան, 1964։

23 Հ. Մ. Եգանյան, Ագրարային հարաբերությունները Իրանում XIX դարի առաջին կեսին, Երևան, 1963։ Նույնի՝ Ագրարային հարաբերությունները Իրանում XIX դարի երկրորդ կեսին, Երևան, 1970։

24 Հ. Մ. Եգանյան, Գյուղացիության վիճակը ժամանակակից Իրանում, Երևան, 1960։

հոսանքների վերաբերյալ[25]։ Նրա մեջ հետազոտվում են կապիտալիստական հարաբերությունների ներթափանցումը Իրան, դրա հետևանքով առաջացած սոցիալ-տնտեսական տեղաշարժերը այդ երկրում և հասարակական-քաղաքական տարբեր հոսանքների առաջացումն ու դրանց դրսևորման ձևերը։

XIX դ. Իրանի միջազգային հարաբերությունների ուսումնասիրությունը իր դրսևորումն է ստացել հատուկ մենագրության մեջ[26], որտեղ հետազոտվում են Իրանի դիվանագիտական-քաղաքական հարաբերությունները՝ Գյուլիստանի դաշնագրից մինչև Թուրքմենչայի պայմանագիրը ընկած շրջանում։ Այս շրջանի Իրանի միջազգային հարաբերությունների ուսումնասիրումը կարևոր է այն տեսակետից, որ տվյալ ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադարձությունները շրջադարձային նշանակություն ունեին ոչ միայն Իրանի, այլև Անդրկովկասի և մասնավորապես Արևելյան Հայաստանի պատմության համար։

Մի շարք ուսումնասիրություններում քննության են ենթարկվում Իրանի առանձին ժողովուրդների և ցեղերի էթնիկական զարգացման առանձնահատկությունները, էթնոգենեզը, ցեղային հարաբերությունների քայքայման պրոցեսը և լուսաբանվում է իրանական ժողովուրդների, ցեղերի ու էթնիկական խմբերի սոցիալ-տնտեսական ու քաղաքական գործունեությունը։ Այս պրոբլեմի ուսումնասիրությունը առաջին հերթին կարևոր է ցույց տալու համար ներկայումս Իրանում բնակվող բազմաթիվ ցեղերի ազգային համախմբման պրոցեսը։

Արաբագետների ուշադրության կենտրոնում են գտնվում արաբական երկրներում ազգային-ազատագրական շարժումների, սոցիալ-տնտեսական վերափոխությունների, տնտեսական և քաղաքական զարգացման, իմպերիալիստական պետությունների և նավթային մոնոպոլիաների դեմ արաբական երկրների պայքարի և մի շարք այլ պրոբլեմներ։

Ետպատերազմյան շրջանում արաբական մի շարք երկրների կողմից անկախություն ձեռք բերելու համար ազգային-ազատագրական պայքարի հուժկու վերելքը նշանակալիորեն ուժեղացրեց արաբական երկրների նկատմամբ գիտական հետաքրքրությունը։ Դրա պատճառներից մեկն էր հանդիսանում նաև այն, որ իմպերիալիստական պետությունները էլ ավելի մեծ ակտիվությամբ պայքար ծավալեցին արաբական նավթի համար։

Սեկտորի արաբագետները իրենց առջև խնդիր դրեցին մանրաղնին կերպով ուսումնասիրել արաբական արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական հեղափոխությունների և շարժումների էությունը, նրանց շարժիչ ուժերն ու նպատակները։ Մասնավորապես հատուկ ուսումնասիրության առարկա դարձան ազգային-ազատագրական շարժումները Իրաքում, Լիբանանում[27] և Մերձավոր ու Միջին Արևելքի արաբական այլ երկրներում։

---

25 Հ. Մ. Եգանյան, Հասարակական-քաղաքական հոսանքները Իրանում XIX դարի վերջին—XX դարի սկզբին, Երևան, 1966։

26 Б. П. Балаян, Международные отношения Ирана в 1813—1828 гг., Ереван, 1967.

27 Ն. Հ. Հովհաննիսյան, Ազգային-ազատագրական պայքարը Իրաքում, Երևան, 1964։ Նույնի՝ Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում (1939—1958 թթ.), Երևան, 1967։

Արաբական երկրների ազգային-ազատագրական և դեմոկրատական շարժումներին հայերի մասնակցության հարցին նվիրված աշխատություններում[28] հանգամանալից կերպով ցույց է տրվում, որ արաբական երկրներում հյուրընկալված հայ աշխատավորական զանգվածները և առաջադիմական գործիչները արաբների հետ ուս-ուսի պայքար էին մղում և այսօր էլ շարունակում են պայքարել իմպերիալիստների և ներքին ռեակցիայի դեմ։

Արևելքի երկրներում արևմտյան տերությունների կողմից սահմանված մանդատային սիստեմի իմպերիալիստական էության մերկացման և այդ սիստեմի դեմ ժողովուրդների պայքարի պատմությանն են նվիրված մի շարք աշխատություններ[29], որոնցում մասնավորապես ցույց է տրվում Սիրիայի և Իրաքի դեմոկրատական ուժերի պայքարը հանուն ֆրանսիական և անգլիական մանդատային սիստեմի վերացման և անկախության նվաճման։

Իմպերիալիստական մոնոպոլիաների պայքարը հանուն արաբական նավթի, և արաբական ժողովուրդների պայքարը իրենց տնտեսական անկախության համար, ինչպես նաև այդ երկրների զարգացման հեռանկարները լուսաբանվում են «Պայքար նավթի համար», «Նավթի արաբական կոնֆերանսները», «Արաբական արևելքը և եվրոպական ընդհանուր շուկան» ուսումնասիրություններում։

Հայ արաբագետների գիտական հետաքրքրության առարկա է հանդիսանում նաև հայ-արաբական դարավոր պատմական և մշակութային կապերի քննության հարցը։

Ներկայումս Սովետական Միության արևելագիտական հիմնարկությունների կողմից Հայաստանը արդեն ճանաչում է գտել որպես մեր երկրի քրդագիտական կենտրոններից մեկը։ Զգալի աշխատանք է ծավալվել քուրդ ժողովրդի պատմության, մշակույթի, մասնավորապես հարուստ բանահյուսության ուսումնասիրման ուղղությամբ։ Սեկտորի քրդագետները հաջողությամբ շարունակում են այն ավանդույթները, որոնց հիմքը դրել են հայ գիտության ու մշակույթի այնպիսի ականավոր գործիչներ, ինչպիսիք են Խ. Աբովյանը, Գ. Սրվանձտյանը, Ս. Եղիազարովը, Հ. Ղազարյանը, Ս. Հայկունին, Բ. Խալաթյանը, Ա. Սաֆրաստյանը, Լ. Մեսրոպը, Լազոն, Հ. Խաչատրյանը և ուրիշներ։ Հայ իրականության մեջ քուրդ ժողովրդի պատմության, մշակույթի, կենցաղի, ազգագրության լավագույն գիտակներից է Ֆեղել նաև մեծանուն գրող Բաֆֆին։

Նկատի առնելով հայ գիտնականների ձեռք բերած նվաճումները քրդագիտության բնագավառում, 1934 թ. որոշվեց առաջին համամիութենական քրդագիտական կոնֆերանսը գումարել Երևանում։

Հանրապետությունում քրդագիտական աշխատանքները առավել մեծ ծավալ ստացան արևելագիտության սեկտորում հատուկ բաժին ստեղծելուց հետո։ Անցած մեկ տասնամյակի ընթացքում սեկտորի քրդագետներն ուսումնասիրել են քրդական ժողովրդական բանահյուսության հետաքրքիր էջերը, քրդերի ազգային-ազատագրական պայքարի արդի փուլը Իրաքում, քուրդ ժողովրդի ծագման և կազմավորման հարցերը, օսմանյան կայսրության դեմ

---

28 Հ. Խ. Թոփուզյան, Հայերի մասնակցությունը Սիրիայի և Լիբանանի ազգային-ազատագրական և դեմոկրատական շարժումներին, Երևան, 1968։

29 Տե՛ս, օրինակ, Н. О. Оганесян, Образование независимой Сирийской республики (1939—1946 гг.), М., 1968.

քուրդ ժողովրդի ազատագրական շարժումների պատմությունը, հայ-քրդական հարաբերությունների հետաքրքիր դրվագները, Սովետական Հայաստանի քրդերի նվաճումները սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի բնագավառներում և այլ հարցեր։

Սեկտորի առաջատար քրդագետներից մեկը՝ պրոֆ. Հաջիե Ջնդին, 1930-ական թթ. սկսած հավաքել, մշակել ու հրատարակել է քրդական բանահյուսության բազմաթիվ հուշարձաններ, որոնցից կարելի է հիշատակել Սասունցի Դավթի քրդական տարբերակը «Դաուդե Սասունե» վերնագրով, քրդական ժողովրդական էպոս «Քար ու Քլուքե Սլեմանե Սլիվին», քնարական-հերոսական պոեմ «Մամե և Զինեն» և այլ գործեր։ Նրա երկար տարիների աշխատանքի արդյունքն են քուրդ ժողովրդի մշակույթի նշանակալից հուշարձաններ հանդիսացող ժողովրդական հեքիաթների լույս տեսած երեք հատորները[30]։ Առաջիկայում լույս կտեսնեն նաև հեքիաթների հետագա հատորները։ Պրոֆ. Ջնդին հրատարակել է նաև «Քրդական էպիկական երգեր» և «Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության արտացոլումը բանահյուսության մեջ», «Սովետական Հայաստանի քրդական գրականությունը» աշխատությունները։ Ներկայումս նա հրատարակության է պատրաստում «Քրդական ժողովրդական առածներ» կապիտալ աշխատությունը։ Հանրապետության առաջատար քրդագետներից էր նաև հանգուցյալ Ամինե Ավգալը, որի աշխատությունները քրդական ազգագրության բնագավառում աչքի ընկնող նվաճումներ են սովետական քրդագիտության անդաստանում։ Արևելագիտության սեկտորում աշխատելու տարիներին նա գրեց և հրատարակեց մի շարք գործեր, որոնք նվիրված են քրդական ընտանիքի ավանդական սովորություններին և սոցիալիստական կարգերի պայմաններում նրանցում տեղի ունեցած էական փոփոխություններին[31]։ Գ. Ակոպովի «Քրդերի ծագման պրոբլեմի քննական պատմություն» ուսումնասիրությունը, որը պաշտպանվել է որպես դոկտորական դիսերտացիա, քննության է ենթարկում քուրդ ժողովրդի էթնոգենեզի և կազմավորման հարցերը։ Քրդագիտական այլ աշխատանքներից կարելի է նշել Շ. Մհոյանի[32], Խ. Չատոևի[33], Ջ. Ջալիլի[34] գործերը։ Արևելագիտության սեկտորի քրդագիտական բաժնի կողմից ներկայումս հրատարակության է պատրաստվում հատուկ ժողովածու, որտեղ լույս կտեսնեն ուշագրավ հետազոտություններ քուրդ ժողովրդի պատմության և մշակույթի այլևայլ հարցերի մասին։ Սեկտորը նախատեսել է նաև առաջիկա տարիների ընթացքում պատրաստել «Քուրդ ժողովրդի պատմությունը» ծավալուն աշխատությունը, որին մասնակցում են նաև Սովետական Միության մյուս արևելագիտական կենտրոնների համարյա բոլոր նշանավոր քրդագետները։

Զգալի աշխատանք է կատարված հայերի և Հայաստանի մասին արևելյան աղբյուրների հրատարակության ուղղությամբ։ Արդեն հրատարակվել են վաստակաշատ թուրքագետ, հանգուցյալ Ա. Խ. Սաֆրաստյանի քառահատոր աշ-

---

30 «Քրդական ժողովրդական հեքիաթներ», հատ. 1, Երևան, 1961, հատ. 2, 1962, հատ. 3, 1969։

31 Ա. Ավդալ, Ազգակցական հարաբերությունները քրդերի մոտ, Երևան, 1965։

32 Շ. Խ. Մհոյան, Քրդական ազգային-ազատագրական շարժումները Իրաքում երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, Երևան, 1965։

33 Х. М. Чатоев, Курды Советской Армении, Ереван, 1965.

34 Дж. Джалил, Восстание курдов в 1880 г., М., 1966.

խատության երեք հատորները» (չորրորդ հատորը հրատարակվում է)։ «Օտար աղբյուրները» մատենաշարի կարևոր գործերից է հանգուցյալ արաբագետ Հ. Նալբանդյանի աշխատությունը[36]։ Սեկտորը հրատարակել է նաև օսմանյան օրենքների ժողովածուն, որտեղ ընդգրկված են XVI—XVII դարերում Արևմտյան Հայաստանում թուրքական պետության կողմից կիրառվող օրենքները և լուսաբանվում են նշված շրջանում սոցիալ-տնտեսական և քաղաքական հարաբերությունները օսմանյան կայսրությունում[37]։ Հրատարակության է ներկայացված Ա. Փափազյանի «Էվլիա Չելեբիի «Ջիհաննուման» որպես Հայաստանի պատմության ուսումնասիրության աղբյուր» գործը՝ բնագրի և թարգմանության հետ միասին։

Աշխատանքներ են տարվում նաև Արևելքի մասին հայկական աղբյուրների հրատարակության և գիտական շրջանառության մեջ դնելու ուղղությամբ։

Արդեն հրատարակվել է Ռ. Աբրահամյանի աշխատությունը[38] և պատրաստվում է մեկ այլ գործ՝ «XVII—XVIII դարերի հայկական աղբյուրները Իրանի մասին» վերնագրով։ Առաջիկայում ևս ուշադրության կենտրոնում է լինելու աղբյուրների հրատարակության գործը, որովհետև ինչպես հայկական աղբյուրներն են նպաստում Արևելքի ժողովուրդների պատմության կնճռոտ հարցերը լուսաբանելուն, այնպես էլ արևելյան աղբյուրները հարուստ նյութ են մատակարարում հայ ժողովրդի պատմության վերաբերյալ։ Ծրագրվել է առաջիկայում հրատարակել Մ. Մաշտոցի անվան մատենադարանում պահվող թուրքական ձեռագիր աղբյուրները։ Այդ գործը, որը նախաձեռնել էր Հ. Փափազյանի հետ հանգուցյալ թուրքագետ Ռ. Սանթուրջյանը, առժամանակ հետաձգվեց, բայց անշուշտ իր ավարտին կհասնի մոտ ապագայում։

Պատմության ինստիտուտի գաղթօջախների պատմության սեկտորի հետ զուգահեռ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրների գաղութների պատմության և մշակութային կյանքի ուսումնասիրությամբ զբաղվում է նաև արևելագիտության սեկտորը։ Վերջինիս ջանքերով արդեն մշակվել են Իրանի, Եգիպտոսի, Սիրիայի հայկական գաղութների պատմության առանձին հարցերը։ Իրանի Նոր-Ջուղայի հայկական գաղութին նվիրված գրքում[39] քննարկվում է նաև XVII դ. իրանա-եվրոպական տնտեսական և քաղաքական հարաբերությունների հարցը։

Բազմակողմանիորեն հետազոտվում են նաև հայ-իրանական, հայ-արաբական, հայ-թուրքական լեզվական և գրական առնչությունները, հայ և հարևան ժողովուրդների պատմական և մշակութային կապերն ու փոխազդեցությունները։

---

35 Ա. Խ. Սաֆրաստյան, Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հատ. Ա, Երևան, 1961, հատ. Բ, 1964, հատ. Գ, 1967։

36 Հ. Տ. Նալբանդյան, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Երևան, 1965։

37 «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (XVI—XVII դդ. կանոնանամեներ)», կազմ. Ա. Խ. Սաֆրաստյան և Մ. Կ. Զուլալյան, Երևան, 1964։

38 Р. А. Абрамян, Армянские источники XVIII в. об Индии, Ереван, 1968.

39 В. А. Байбуртян, Армянская колония Новой Джульфы в XVII в. (роль Новой Джульфы в ирано-европейских политических и экономических связях), Ереван, 1969.

Լուրջ ուշադրություն է դարձվում հայ ժողովրդի արևմտահայ հատվածի ստեղծած հարուստ մշակութային ժառանգությունը ուսումնասիրելու և վեր հանելու գործին։ Այդ նպատակով մշակվում է հայատառ Թուրքերենով հարուստ գրականությունը, Թուրքալեզու հայ աշուղական գրականությունը, Արևմտյան Հայաստանում հայկական կրթական հաստատությունների գործունեությունը և այլն։

Ուսումնասիրվել են գրականագիտական մի շարք թեմաներ և լույս է տեսել պարսկական ժամանակակից գրականությանը նվիրված աշխատություն[40]։

Կազմվել են նաև երկու բառարան՝ արաբերեն-հայերեն[41] և պարսկերեն-հայերեն։ Առաջինը սեկտորը հրատարակեց Բեյրութում, նպատակ ունենալով օգնել արաբական երկրներում բնակվող սփյուռքահայությանը հարևան արաբ ժողովրդի լեզուն ուսումնասիրելու գործում, իսկ երկրորդը առաջիկայում կներկայացվի հրատարակության։

Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ սեկտորը հրատարակեց «Վ. Ի. Լենինը և Մերձավոր ու Միջին Արևելքի ժողովուրդների պայքարը» կոլեկտիվ աշխատությունը, որտեղ լուսաբանվում են հեղափոխության մեծ առաջնորդի գաղափարների ազդեցությունը Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական, հակաիմպերիալիստական շարժումների վրա, ցույց են տրվում արաբական երկրների, Իրանի և Թուրքիայի դեմոկրատական հեղափոխությունների և ազգային-ազատագրական շարժումների կոնկրետ առանձնահատկությունները։

Ներկայումս ստեղծվում են մի շարք ընդհանրացնող կոլեկտիվ աշխատություններ, որոնցում կամփոփվեն արդեն հասունացած և հրատապ նշանակություն ունեցող պրոբլեմներ։ Այսպես, սեկտորը հրատարակության է պատրաստել «Սիրիայի նորագույն պատմությունը», ծրագրված է մոտ ժամանակների ընթացքում ավարտել «Իրանի նոր պատմությունը», «Օսմանյան կայսրությունը երիտթուրքերի տիրապետության շրջանում», «Ժամանակակից պարսից գրականությունը» կոլեկտիվ աշխատությունները։

Արևելագիտության սեկտորը լայնորեն գործակցում է նաև ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի կողմից կոորդինացվող կարևորագույն կոմպլեքսային պրոբլեմների մշակմանը։ Սեկտորի մի շարք աշխատակիցներ մասնակցել են ՍՍՀՄ ԳԱ արևելագիտության ինստիտուտի կողմից հրատարակված «Թուրքիայի նորագույն պատմություն» կոլեկտիվ աշխատության, «Ժամանակակից Թուրքիա» տեղեկատուի, «Թուրքական քաղաքական կուսակցություններն ու գործիչները» աշխատության ստեղծմանը և այլն։ Սեկտորի աշխատակիցները տարբեր հարցերի նվիրված հոդվածներով հանդես են գալիս նաև արտասահմանում (ԳԴՀ, Իրան, Լիբանան և այլն)։ Նրանց մի շարք մենագրություններ թարգմանվել և հրատարակվել են անգլերեն և արաբերեն լեզուներով։

Սովետական Հայաստանի արևելագետները ակտիվորեն մասնակցել են նաև միջազգային և համամիութենական գիտական կոնգրեսներին, կոնֆերանսներին և նստաշրջաններին։ Նրանց ելույթները առանձին ժողովածուներով հրատարակվել և մտել են գիտական շրջանառության մեջ։

---

40 Ա. Բուդաղյան, Հ. Մովսիսյան, Լ. Շեխոյան, Սոցիալական մոտիվները ժամանակակից պարսկական արձակում, Երևան, 1970։

41 «Արաբերեն-հայերեն բառարան», կազմեցին Ս. Զուլչյան և Հ. Սարգսյան, Բեյրութ, 1969։

Հանրապետությունում արևելագիտության զարգացման գործում իր երախտիքն ունի ԳԱ պատմության ինստիտուտը։ Այստեղ աշխատած ինչպես մեր ավագ սերնդի, այնպես էլ միջին ու երիտասարդ սերնդի այնպիսի գիտնականների աշխատություններում, ինչպիսիք են՝ Ա. Գ. Հովհաննիսյանը, Մ. Գ. Ներսիսյանը, Ա. Ռ. Հովհաննիսյանը, Պ. Տ. Հարությունյանը, Ծ. Պ. Աղայանը, Ա. Ն. Մնացականյանը, Հ. Ս. Անասյանը, Ա. Գ. Գալստյանը, Մ. Կ. Ջուլալյանը, Ա. Ն. Տեր-Ղևոնդյանը, Ս. Վ. Հովնանյանը, Ա. Ս. Համբարյանը, Հ. Մ. Հաղարյանը, Ռ. Փ. Հովհաննիսյանը, հայ ժողովրդի պատմության հարցերի լուսաբանման կապակցությամբ քննության են ենթարկում նաև Մերձավոր և Միջին Արևելքի տարբեր երկրների պատմության բազմապիսի հարցեր։

Հետաքրքիր ուսումնասիրություններ են կատարվում նաև հնագիտության և աղբագրության, ինչպես նաև արվեստի ինստիտուտներում։

Մաշտոցի անվան մատենադարանում պահվող հազարավոր ձեռագիր հիշատակարանները, հիշատակագրությունները, վավերագրերը և այլն անսպառ նյութեր են պարունակում Հայաստանի և հարևան երկրների պատմության և մշակույթի այլևայլ հարցերի մասին։ Մատենադարանի հավաքածուների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում արաբատառ (պարսկերեն, արաբերեն, թուրքերեն) վավերագրերի ֆոնդը, որը կարևոր արժեք է ներկայացնում ողջ Առաջավոր Ասիայի միջնադարյան և նոր շրջանի պատմության, սոցիալ-տնտեսական կյանքի և մշակույթի ուսումնասիրության համար։ Այս նյութերի մի մասը թեև արդեն ուսումնասիրվել ու հրատարակվել է[42], սակայն դեռևս մնում են բազմաթիվ աղբյուրներ, որոնք սպասում են իրենց ապագա հետազոտողներին։ Սովետական Միությունում արևելագիտական կադրերի աճող պահանջը անհրաժեշտություն ստեղծեց ընդլայնել համալսարանի արևելագիտության բաժնի գործունեությունը։ Այդ իսկ պատճառով 1968 թ. համալսարանում բացվեց արևելագիտական ֆակուլտետը, որն ունի մասնագիտական երկու ուղղություն՝ լեզու-գրականություն և պատմություն։ Նշված ֆակուլտետում պատրաստվում են մասնագետ արաբագետներ, իրանագետներ, թուրքագետներ, քրդագետներ։

Համալսարանի արևելյան բաժնում, իսկ հետագայում արևելագիտության ֆակուլտետում աշխատող դասախոսները մանկավարժական գործունեությունը հաջողությամբ զուգակցելով գիտահետազոտական աշխատանքի հետ, տվել են մի շարք հետաքրքիր և ուշագրավ գործեր։ Համալսարանում աշխատող գիտնականների՝ Տ. Հ. Հակոբյանի, Է. Բ. Աղայանի, Ռ. Ն. Նալբանդյանի, Ս. Մելիք-Բախշյանի և ուրիշների աշխատությունները զգալի ներդրում են հանրապետության արևելագիտական մտքի զարգացման գործում։

Իրենց ուսումնասիրություններում Մերձավոր և Միջին Արևելքի պատմության և մշակույթի հարցերին լայնորեն անդրադարձել են նաև Հայաստանի տարբեր գիտական հիմնարկություններում աշխատող կամ նրանց հետ գոր-

---

42 Հ. Դ. Փափազյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ. 1, Երևան, 1956, պրակ 2, 1959։ Նույնի՝ Մատենադարանի պարսկերեն կալվածագրերը, պրակ 1, Երևան, 1968։

ծակցող հայ գիտնականները, որոնցից կարելի է հիշատակել պրոֆ. Լ. Մ. Մելիքսեթ-բեկին[43], իրանագետ, պրոֆ. Ռ. Թ. Աբրահամյանին[44] և ուրիշներին։

Սովետական իշխանության 50 տարիների ընթացքում հայ արևելագիտությունը ապրել է աննախընթաց վերելք։ Բարձր որակավորում ունեցող կադրերի աճը, արևելագիտական կենտրոնների կազմակերպչական ձևավորումը, կուսակցության և կառավարության հոգատարությունը գիտության այդ բնագավառի զարգացման նկատմամբ, ինչպես նաև հայ արևելագիտության հարուստ ավանդույթները լուրջ հիմք են հանդիսանում սովետահայ արևելագիտության հետագա զարգացման ու առաջընթացի համար։

---

43 Л. М. Меликсет-Бек, Первые Ахемениды и названия рек Закавказья. «Труды Тбилисского Государственного университета», т. 91, сер. Востоковедения, вып. II, Тбилиси, 1960.

44 Ռ. Թ. Աբրահամյան, Արտավիրաց նամակ Յուշտի ֆրիան, Երևան, 1958։ Նույնի՝ Պահլավերեն-պարսկերեն-հայերեն-ռուսերեն-անգլերեն բառարան, Երևան, 1965։ Նույնի՝ Ֆէրդովսին և իր Շահնամեն, հատ. Ա, Թեհրան, 1934։ Նույնի՝ Պահլավերեն անհայտ բառերի ընթերցումը, ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի «Աշխատությունների ժողովածու», հատ. 3, 1948։